Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԽՆԿՈ ԱՊԵՐ

# ՄՈԾԱԿԸ



ՊԵՏՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1931

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

891.995
Խ-64

А 207

02 SEP 2011
9907

ԽՆԿՈ ԱՊԵՐ

# ՄՈԾԱԿԸ

ՆԿԱՐՆԵՐ ՎԱՐՏ-ՊԱՏՐԻԿՈՎԻ

## ԾՆՈՒՆԴԸ

Հայրը՝ մոծակ,
մայրը՝ մոծակ,
ինքը՝ մոծակ.—
մոծակի ձագ,
մոծակի ցեղ.
կնճիթն՝ ասեղ.
յերկու թեթև,
թափանցիկ թև.
յերեք զույգ ոտ՝
բարակ ծղնոտ.
սուր—սուր սրունք.
թաթն անկրունկ.
փորը դատարկ
փուչիկ, թե՞ պարկ։
ծնվեց ճահճում,
իր մոր մահճում։



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUR-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
59791-66

891.99Մ
Խ-64
2011-05



## ԱՆՈՒՆ ԴՐԻՆ

Տատն է պաչում,
տալիս պապին,
պապն է պաչում,
տալիս տատին,
մոծակներին
կնունք կանչում,
վոր թոռին տան
անուն կոչում։
Հյուրերն յեկան,
ուռան,կերան.
ու կանչեցին
մի մի բերան.
«Մանուկ, յեղիր
բարի ժառանգ.»
յեվ անունը
դրին Վարակ։



## ԳՆԱ՛ ԱՇԽԱՐՀ

Պա՛պ, տա՛տ ասին.
—Թոռնիկ Վաչակ
Մոծակ ցեղի
ընտիր զավակ,
գնա՛ աշխարհ,
կծի՛ մարդուն,
վորտեղ լինի,...
քնած, արթուն.
Նրա կնկան,
ծծկեր վորդուն:
Նրանց կծի,
արյուն ծծի,
տենդ, դող, երոցք
տուր, տարածի:

## ԱՅ ԹԵ ԻՆՉՈՒ.

Մարդն անում է
մեզ ընաջինջ.
հնարել է
չգիտես ինչ—
Մի սև ու մութ
ինստիտուտ.
տրոպկայան,
տենդակայան,
փորձակայան,







փորձանք—կայան,
բժիշկ, բուժակ,
քույր ու հսկում,
դեղ ու բաժակ
ասեղ—սրսկում:
Ընկել են տուն,
գոմ ու մարագ,
վորոնում են
ձու, ձագ, վարակ:
Ամոթ չունեն,
վոր ամաչեն,
ծուխ են տալիս
վոր մեզ ջնջեն:
Եղ դեռ հլա
քի՛չ է, դեռ քիչ..
ձեռք են տալի
ճլկուտ, ճահիճ,
ինչ է ծածկեն
քարով, հողով
ու մեզ վերջ տան
ազգով—ցեղով:
Տանք եղ մարդուն
վարակ ու թույն:





Մեռիր, Վարակ,
գյուղ ու քաղաք,
բայց թե չընկնես
մարդու ծուղակ։



## ՎԱՐԱԿԻ ՎԵՐՋԸ

Վարակն յեկավ
իր հանգի
Յերևանի
Կոմայգի։
Տեսավ, ինչը
չէր տեսել,
լսեց, ինչը
չէր լսել։
Մանկապարտեզ
յերեխեքը,
ծիլի՜, վիլի՜ —
Խաղ, պար, յերգ
«Այ կարուսել,
կարուսել,»



դու յեր, յես եր,
Մարուսն եր,
Սիսոն, Միսոն,
Արուսն եր,
Արմն, Լենոն,
Տիրան եր,
դու եր, յես եր.
Հայան եր
Պիտի նստեր կարուսել.
«Այ կարուսել,
կարուսել,
ել չենք կարող
սպասել»։

Վարակն իրեն
թե հասի.
կծեց բթիկն
Արուսի
ու թր՜ռ..ծառն
տըզզալեն։
Մի մեծ բզեզ
վզզալեն,
ըն՜ը, ճանկեց
Վարակին —
մոծակ պապի
ժառանգին,
վոր յեկել եր
Կոմայգի,
մարդուն տենդով
վարակի։



ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՌ-Арм.ССР
ИМ. А. МЯСНИКЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0396263

9907

65

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.



Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

ХНКО АПЕР

# КОМАР

ГИЗ. С.С.Р.А.

ЭРИВАНЬ 1931

ՊԵՏՀՐԱՏ № 1499 ԳՐԱՌԵՊ № 6167 ՎԻՄ. ՊԵՏ ՀՐԱՏԻ ՊԱՏ. № 493 ՏԻՐԱԺ 5000